**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

2013թ. ապրիլի 17 թիվ 31 -Ա

ԱՊԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿՈՂՄԻՑ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ 1986-1995ԹԹ. ԾՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Զինապարտության մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով Ապարանի զորակոչային տեղամասում 1986-1995թթ. ծնված քաղաքացիների գարնանային զորակոչը կազմակերպված անցկացնելու նպատակով՝ ***կարգադրում եմ.***

1.Ապարանի տարածքային զինվորական կոմիսարին՝
1) մարտ-հունիս ամիսներին սկսել 1986-1995թթ. ծնված քաղաքացիների զորակոչը,
2) զորակոչել արական սեռի այն քաղաքացիներին, որոնց զորակոչային տարկետումները լրանում են 2013 թվականի գարնանը և 18 տարին լրանում է զորակոչի օրը,
3) պարզել 1986 թվականից մինչև 1995 թվականի ծնված զինակոչիկների գրանցման տվյալները,
4) ստուգել տարկետման մեջ գտնվող զինակոչիկների փաստաթղթերի օրինականությունը և տեղեկանքների թարմացումը,
5) զորակոչը և զորակոչի զննման աշխատանքները սկսել 2013 թվականի մարտի 9-ին և ավարտել 2013 թվականի հունիսի 30-ին:
2. Հաստատել՝
1) զորակոչային հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի,
2)զորակոչիկների բժշկական ստուգումներն անցկացնող հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի,
3) զորակոչիկների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու համար ստեղծված հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.
ա. հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել Արագածոտնի մարզային զորակոչային հանձնաժողովի հաստատմանը:
3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝
1) ապահովել բժշկական հանձնաժողովի բոլոր անդամների պարտադիր ներկայությունը զորակոչային հանձնաժողովի աշխատանքներին,

2) բժշկական ստուգման և զորակոչի օրերին զորակոչային և բժշկական հանձնաժողովի անդամներին ազատել իրենց աշխատանքային պարտականություններից:

4. <<Ապարնի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն Հ.Շմավոնյանին՝

1)կազմակերպված անցկացնել զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկների ֆլյուորոգրաֆիան, արյան խմբի որոշումը և ՄՈՊ-ը,

2) ժամանակին կազմակերպել այն զորակոչիկների բուժումը, որոնք զորակոչային հանձնաժողովի կողմից ուղարկվել են բուժման,

3) հանձնաժողովին ապահովել անհրաժեշտ գույքով, հատուկ բժշկական սարքավորումներով, դեղորայքով,

4) զինկոմիսարիատի հայտով հատկացնել մեկ սանիտարական մեքենա՝ զորակոչիկներին Հանրապետական հավաքակայան տեղափոխելու համար:

5. Առաջարկում եմ Ապարանի և Արագածի տարածաշրջանների համայնքների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին՝

1) օժանդակել զորակոչիկների ժամանակին և պարտադիր ներկայությունը զինկոմիսարիատ՝ համաձայն զինկոմիսարիատի ներկայացրած չվացուցակի և անհատական ծանուցագրերի:

6. Բոլոր համայնքների ղեկավարներին՝ զորակոչից առաջ զինկոմիսարիատի հետ միասին մանրամասն ճշտել զորակոչիկների տվյալները:

7. Հանձնարարել Ապարանի և Արագածի ոստիկանության բաժիններին՝

1) ապահովել հասարակական կարգի պահպանումը զորակոչի տեղամասում,

2) զինկոմիսարիատից ստացված տվյալների հիման վրա կազմակերպել այն անձանց որոնումները, որոնք խուսափում են ներկայանալ զորակոչային տեղամաս:

8. Սույն կարգադրության կատարման պատասխանատվությունը դնել Ապարանի զինվորական կոմիսար Հ.Թանգամյանի վրա:

Ծ.ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ.ապրիլի 17 - ի թիվ 31 -Ա
կարգադրության

# ԿԱԶՄ

Ապարանի տարածքային զինվորական կոմիսարիատի զորակոչային հանձնաժողովի

| | |
|---|---|
| Հ.ԹԱՆԳԱՄՅԱՆ | - Ապարանի տարածքային զինվորական կոմիսար, հանձնաժողովի նախագահ |
| Գ.ԵՐԵՄՅԱՆ | - Ապարանի քաղաքապետի տեղակալ |
| Ռ.ՀԱԿՈԲՅԱՆ | - ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Ապարանի բաժնի աշխատակից |
| Բ. ՎԱՐԴԱՆՅԱՆ | - Աշխատանքի և պատերազմի վետերանների խորհրդի նախագահ |
| Ի.ԱԼՈՅԱՆ | - հանձնաժողովի ավագ բժիշկ, վիրաբույժ |
| Ռ.ԱՎԱԳՅԱՆ | - հանձնաժողովի քարտուղար |

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. ապրիլի 17 -ի թիվ 31 -Ա
կարգադրության

ԿԱԶՄ
Ապարանի տարածքային զինվորական կոմիսարիատի բժշկական զորակոչային հանձնաժողովի

Ի.ԱԼՈՅԱՆ - վիրաբույժ
Բ.ՄԱՆՈՒԿՅԱՆ –հոգեբույժ
Դ.ԳՐԻԳՈՐՅԱՆ – նյարդաբան
Լ.ԱԹՈՅԱՆ - ակնաբույժ
Դ.ՂԱՄԲԱՐՅԱՆ -քիթ-կոկորդ-ականջ
Կ.ՀՈՎՆԱՆՅԱՆ –սրտաբան
Տ.ՀՅՈՒՍՅԱՆ - մաշկավեներոլոգ
Գ.ԱԼԵՔՍԱՆՅԱՆ -բուժքույր

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2013թ. ապրիլի 17 -ի թիվ 31 -Ա
կարգադրության

# ԿԱԶՄ

Զորակոչիկների և զինծառայողների ընտանեկան, գույքային և նյութական ապրելակերպի պայմաններին ծանոթանալու, ստուգելու հանձնաժողովի

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ - Ապարանի զինկոմիսարիատի կցագրման գծով տեսուչ
Ա.ՊԱՊԻԿՅԱՆ - Ապարանի զինկոմիսարիատի ՆՊԶ-ի գծով տեսուչ
Ռ.ԲԱՐՍԵՂՅԱՆ - Հարթավան գյուղի հաշվառման տեսուչ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ԳԵՎՈՐՅԱՆ